եաններ և զինք կը յորդորեն որ աղերսագիր ներկայացնէ Սուլթանին. միանգամայն դրամական օգնութիւններ կ'ընեն և կը խոստանան ձեռնտու ըլլալ իրեն. «և ժողովեցան առ նա, կ'ըսէ Զաքարիա, ամենայն բարեկամք նորա՝ որք ի կողմանցն պարսից, որք ի կողմանցն օսմանցւոց, և առաքեցին զկաթուղիկոսն յԱդրիանուպոլիս» (23) ուր կը գտնուէր Սուլթան Մուհամմէտ Դ. ։ Յակոբ Ջուղայեցի երեսուն քսակ դրամով, այսինքն 15.000 դահեկանով, ընդդէմ Ապրոյ Չելեպիի և Եղիազարի, կը կաշառէ թուրք մեծամեծներն ու Սուլթանին սիրելիները (24), մասնաւորապէս Ղայմախ Խանը։ Կաթողիկոսին կ'օգնեն գլխաւորաբար Խոսրով և Միրզա՝ Ջահկեցիներու գլխաւորները։ Մանաւանդ Խոսրով պատճառ կը հանդիսանայ յաջողութեան, ըստ Զաքարիա պատմիչին, որ այսպէս կը նկարագրէ Հայրապետին դիմումը. «կայր այր մի մեծ առ Թագաւորն, որ բազմէր ընդ Թագաւորին ի սեղան, որոյ անունն էր Ղայմաղ Խան. սա էր բարեկամ Խոսրովին. և միշտ գնայր առ նա Խոսրովն, և բերէր նմա կերպաս հանդերձս, վաճառէր նմա, և առնոյր զգինն լիով. և այսպէս հաւատարիմ լինելով՝ սի-

(23) Զամարիա, անդ, հատ. բ. էջ 73:

(24) Զամչեան, Գ. 714: Դիւան Ս. Յակոբայ, Սիոն, ԺԴ. Տարի, 1940, Դեկտ. թիւ 12, էջ 315—316։